ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2019 թվականի N: 242-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի № 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի № 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի» 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում Վանիկ Սերոբյանի փոխարեն ընդգրկել Ռուբեն Հարությունյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզպետի 2008 թվականի հունվարի 7-ի № 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 176-Ա որոշման հավելվածում «Վանիկ Սերոբյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական» բառերը փոխարինել «Ռուբեն Հարությունյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ» բառերով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է